ՀԱՅ ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1991-2005թթ.)

Կարեն Խանլարյան

Հոդվածում Թուրքիայի էթնիկական և դավանական բարդ դիմագծի համատեքստում քննարկվում է հայկական էթնիկական տարրի գոյության հետ կապված հարցը: Նշվում է այդ երկրում պատմական տարբեր ժամանակաշրջաններում մահմեդականացված հայության հոծ զանգվածի առկայության և հայերի ինքնության, թվաքանակի հետ կապված բարդ հիմնախնդիրների մասին:

Թուրքիայի հայությունը կենցաղահասարակական ներքին հարաբերությունների տեսանկյունից և ուծացման ենթարկվելու իմաստով մեծապես այլատարր է և ներկայանում է դիմագծային տարբեր տիպերով: Հոդվածում փորձ է արվում ներկայացնել «Անատոլիայի» հայության տիպաբանական բաժանումը էթնոկրոնական տեսակների և նրա ներկայիս կացությունն ու զարգացման հեռանկարները:

Ներածություն

Ներկայիս Թուրքիայի էթնոկրոնական խմբերի պատկերը կազմում է խիստ բարդ խճանկար: Հակառակ պետական պնդումներին ու ներկայացրած վիճակագրական տվյալներին, այսօր Թուրքիայում ապրում են ավելի քան 50 էթնոկրոնական խմբեր (տե՛ս *Հավելված):*

Գոյություն ունեցող էթնիկական խմբերի նկատմամբ պատմականորեն կիրարկվել է ուծացման համատարած և բիրտ քաղաքականություն: Պիտի ասել, որ Լոզանի դաշնագրի տրամադրությունների հիման վրա՝ Թուրքիայում միայն պոլսաբնակ հայերը, հույներն ու հրեաներն են պաշտոնապես ճանաչվում որպես «փոքրամասնություն»: Էթնոկրոնական մյուս խմբերի մասին նույնիսկ օրենքով արգելված է խոսելը: Սակայն Թուրքիայի կառավարության Մարդու իրավունքների խորհուրդը, Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու թոհուբոհում, 2004թ. հոկտեմբերին հրապարակեց մի տեղեկագիր, որում ընդգծվում էր Թուրքիայի զանազան ազգերի ու էթնիկական խմբերի գոյության հարցը: Կառավարություն առաքված տեղեկագիրը չհաստատվեց և չպաշտոնականացվեց, այնուամենայնիվ, մնաց որպես Թուրքիայի իրական վիճակն արտացոլող նշանակալի փաստաթուղթ, ուր նշվում էր. «Այլևս անցել է թուրքական վերին ինքնության և մի մշակույթի ու լեզվի վրա հիմնված պետականության շրջանը» [1]: Առաջարկվում էր «թուրքական վերին ինքնության» տակ ընդունել նաև մշակութային ու լեզվական բազմաթիվ ենթաինքնությունները:

Սույն տեղեկագրի բովանդակության առումով հատկանշական են «Ռադիկալ» թերթի վերլուծաբան Ադնան Քեսքինի հետևյալ տողերը. «Այսօրվա սահմանադրությունը, որի առաջին հոդվածներից մեկն արգելում է նույնիսկ փոփոխություն առաջարկել երկրի ամբողջականության ու անբաժանելիության սկզբունքի մասին, այսօր *ժամանակավրեպ* է դարձել, որովհետև այդպիսի մի ամբողջականության մասին խոսելը նշանակում է պնդել երկրի «մոնոլիտ» լինելու, այսինքն՝ *միակտուր ու միահատված* լինելու վրա ու ժխտել մյուս փոքրամասնություններուն գոյությունը» [1]:

Թուրքիայի քաղաքական ուժերից և կուսակցություններից ոչ մեկը (բացառությամբ հատուկենտ ծայրահեղ ձախ հոսանքների և քրդական խորհրդարանական *DeHaP* կուսակցության) Լոզանի դաշնագրի հասկացությունների ընդհանուր շրջագծից դուրս չի ընդունում էթնոկրոնական որևէ խմբի գոյության փաստը: Դրանցից ոմանք, օրինակ՝ «Գորշ գայլերը», նույնիսկ դա էլ են մերժում: Սակայն գտնվում են ավելի լայնախոհ մտածողներ *(CeHePe և ANAP)*, որոնք, օրինակ, Կ.Պոլսի քաղաքապետական խորհուրդների 2004թ. ընտրություններում մի քանի հայեր են ներառում իրենց ընտրացանկերում [2]:

Թուրքիայի հայությունը կենցաղահասարակական ներքին հարաբերությունների տեսանկյունից և ուծացման ենթարկվելու իմաստով մեծապես այլատարր է առայսօր և ներկայանում է դիմագծային տարբեր տիպերով:

Թուրքիայի հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստյանը 1980թ., Երուսաղեմում, բանախոսության մեջ հետևյալն է ասում զավառահայության մասին. «Ձեզ կներկայացնեմ զավառահայության չորս խավերը, ինչպես որ տեսել եմ նրանց.

ա. Հայեր, որոնք գիտակցաբար և կամավոր կերպով իսլամացել են, խզվել են հայությունից և ապրում են թուրքերի մեջ: Սրանք են, որ մինչև միլիոնի հասնում են իրենց թվով:

բ. Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են և քրդական աշիրեթական ձևերով ապրում են մեկուսի և չեն խառնվում:

գ. Կամա թե ակամա իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են և Պոլիս հաստատվելուն պես՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրությունը «էրմենի»-ով են փոխարինում:

դ. Բուն զավառահայերը, որ պատիվ իրենց՝ հակառակ բոլոր զգալի և անզգալի դժվարություններին՝ հայ են մնացել և այսօր Ստամբուլի հայության մեծագույն մասը նրանցից է բաղկանում» [3] :

Թեև Շնորհք պատրիարքի այս տեղեկատվության համաձայն՝ ներկայիս կացությունը փոխված կարելի է համարել, այնուամենայնիվ՝ դա բավարար հիմք է հանդիսանում «Անատոլիայի» հայությանը տիպաբանական իմաստով բաժանել երեք էթնոկրոնական տեսակների.

- ***«Պաշտոնական» հայություն.*** այս տեսակը Հայ Առաքելական, Կաթողիկե կամ Ավետարանական եկեղեցիներին կապվող համայնքների տեսքով գոյատևել է զանազան նահանգներում և ավաններում: «Պաշտոնական» հայության կապը Կ.Պոլսի կազմակերպված համայնքի հետ քիչ թե շատ պահպանվել է մանավանդ պատմական Կիլիկիայում:
- ***«Իսլամացած» հայություն.*** այս տեսակը հիմնականում բաղկացած է պոնտահայ և համշենահայ մանր ու խոշոր տոհմական խմբերից, որոնք իսլամացել են 17-րդ և 18-րդ դարերում և բնակվում են սևծովյան ափերիզում, պատմական Ջանիկից (Սամսունից) մինչև հայվրացական սահմանները երկարող տարածքներում: «Իսլամացած» տիպն իր համեմատական լայն շրջագծում պարունակում է այստեղ նաև «կես-կես» և «հայ-լազ» կոչված խմբերին նաև [4]:
- ***«Թաքուն» հայություն.*** այս տեսակը բռնի կերպով և իր ֆիզիկական գոյությունը պահելու հարկադրանքի տակ իսլամացել է հայկական պարբերական կոտորածների և, մասնավորաբար, 1915թ. Ցեղասպանության արդյունքում և ապրում է բազմաթիվ առանձին, քրդաբնակ և թուրքաբնակ գյուղերում ու գյուղակներում: Այս տեսակը վերոնշյալ «իսլամացած» տեսակից տարբերվում է իր իսլամացման ժամանակով և գործընթացով: Այլապես՝ ընդհանուր օրինաչափ երևույթը և արդյունքը մնում են նույնը:

Ներկայիս կացությունը

Պատմական ներկա ժամանակահատվածի բնորոշ շրջադարձը Խորհրդային Միության փլուզումն է՝ բոլոր հարակից հետևանքներով: Մի շարք քաղաքական վերլուծաբաններ փլուզման պատճառները հիմնականում գտնում են խորհրդային համակարգի տնտեսական սնանկության, ռազմական և տիեզերական տեխնոլոգիաների անմրցունակության ու տկարության մեջ: Սակայն մեր գնահատմամբ՝ փլուզման գլխավոր և առաջնային պատճառներն են հանդիսացել ազգային-էթնիկական հարցերի առկայությունն ու վերազարթոնքը մի կողմից և մյուս կողմից՝ տեղեկատվական աշխարհի սրընթաց զարգացումները: Այս երկու գործոնները, փլուզման պատճառ հանդիսանալուց բացի, հեղափոխական իրավիճակի մեջ դրեցին տարածաշրջանի իրավազրկված ազգերին և էթնիկական խմբերին՝ իրենց ազգային ինքնության ու չլուծված հարցերի արծարծման ուղղությամբ:

Թուրքիան, Խորհրդային Միության պես բազմազգ պետություն լինելով հանդերձ, նույն ճակատագրին չենթարկվեց: Սակայն Խորհրդային Միության փլուզումը և դրա հետևանքով խորհրդային հանրապետությունների անկախությունը քաղաքական ու իրավական նախադեպ հանդիսա-

ցավ մյուս բոլոր բազմազգ պետությունների համար: Այսպիսով՝ Թուրքիան ապրեց և ներկայումս էլ ապրում է փլուզման զարհուրելի մղձավանջ:

Թուրքիայի հավանական փլուզման և հողային ամբողջականության քայքայման ցանկացած ուղի, մեր համոզմամբ, անխուսափելիորեն անցնելու է Հայկական հարցի միջով: «Թուրքիայի համար,- գրում էր Ռուբեն Տեր-Մինասյանը,- Հայկական խնդիրը նույնքան և ավելի վտանգավոր կհամարվեր, քան քրդականը: Հայ ժողովրդի ազգային գիտակցությունը, բարձր մշակույթը, Հայկական դատի միջազգային բնույթը ավելի հավանական կդարձնեին Հայաստանի, քան Քուրդստանի ստեղծումը» [5]: Եթե Ռուբենի թվարկած գործոններին գումարենք նաև այսօրվա անկախ Հայաստանի գոյությունը, ապա պատահական չպիտի համարել *BBC* 2004թ. հոկտեմբերի վերլուծությունը, համաձայն որի՝ «Թուրքիայում ոչ մի հարց չունի այն աստիճան զգայնություն, որքան՝ հայերի ճակատագիրը Օսմանյան կայսրության վերջին տարիներում» [6] :

Ահա Թուրքիայի հայության ներկա կացությունը.

1. «Պաշտոնական» հայություն. - Հայության մյուս տեսակների համեմատությամբ «պաշտոնական» հայության ներկա վիճակի մասին առավել քանակությամբ տեղեկություններ կան մեր տրամադրության տակ: Որոշ բացառությամբ՝ նրա վիճակը այսօր ևս շարունակում է մնալ անմխիթար: «Թայմզ» օրաթերթը 1994թ. տվեց այն բանի ազդանշանը, որ Թուրքիայի դեմ մի նոր արշավ պիտի բացվի՝ քրիստոնյաների վրա ծանր ճնշումների առկայության հետ կապված: «Թայմզի» լուրը մասնավորաբար գրի է առնվել *Թուրքիայի արևելյան նահանգներում* ապրող քրիստոնյաների կապակցությամբ [7]:

1995թ. հրատարակված «Հայերն աշխարհում» համառոտ հանրագիտարանը «պաշտոնական» հայության թվաքանակը գնահատում է մոտ 10 հազար [8]:

2. «Իսլամացած» հայություն. - Հարվարդի և Կոլումբիայի համալսարանների լեզվաբանական շրջանակներում համբավ ունեցող Բերտ Վաուքսն իր մասնագիտական հոդվածի նախաբանում համշենահայությանը հիմնականում բաժանում է երեք խմբի [8].

ա. արևմտյան համշենահայություն. Օրդուում, Տրապիզոնում և Ռիզեում ցրված, թուրքախոս և իսլամին հարած,

բ. արևելյան համշենահայություն. առավելաբար Արդվինում բնակվող, համշենահայ բարբառով խոսող և իսլամին հարած,

գ. հյուսիսային համշենահայություն. Վրաստանում և Ռուսաստանում բնակվող, համշենահայ բարբառով խոսող և քրիստոնյա:

Իսլամացած և Թուրքիայում բնակվող առաջին երկու խմբի թվաքանակը գերակշռում է Թուրքիայի սահմաններից դուրս բնակվող վերջին խմբին:

Wikipedia համացանցային հանրագիտարանը Թուրքիայի համշենցիների կամ հեմշինլիների համար նման մի տեսակավորում է նկատի առնում՝ արևմտյան խումբը կոչելով «Բաշ-հեմշինցիներ», իսկ արևելյան խումբը՝ «Հոփա-հեմշինցիներ» [9] :

Հարավային Կալիֆորնիայի համալսարանի քաղաքական գիտությունների թեկնածու Հովան Սիմոնյանը Ռիզեում բնակվող արևմտյան համշենահայության (կամ բաշ-համշենցիություն) թվաքանակը գնահատում է 15-23 հազար: Հ.Սիմոնյանը Հոփայի (պատմական Խոպա) արևելյան համշենահայերի թիվը ներկայացնում է 25 հազար մարդ [10]:

Նշանակում է, որ հանձին Խոպայի բնակչության, այժմ համշենահայությունը այդտեղ կազմում է բնակչության բացարձակ մեծամասնությունը: Այս նշանակալի իրողությունը հաստատվում է նաեւ *Armeniapedia* էլեկտրոնային հանրագիտարանի հեղինակների կողմից [11]:

Թուրքիայի համշենահայության թվաքանակի մասին վկայությունները բավականին տարբեր են ու այլազան:

Դոկտ. Թեսա Հոֆմանի գնահատմամբ՝ «Այնտեղ 20 հազար մուսուլման համշենցիներ կան, որոնց հայրենիքը գտնվում է Տրապիզոնի և Էրզրումի արանքում» [12, p. 11]:

Դժվար է ճշտել, թե որոնք են համշենահայության թվաքանակի թերագնահատման պատճառները: Վիճակագրական ստույգ տվյալների բացակայության պայմաններում՝ մենք գտնում ենք, որ Թուրքիայի պետական շրջանակներում առկա է պոնտահայերին պոնտացի հույներ, բաշ-համշենցիներին լազեր և արևելյան համշենահայերի մի բաժնին՝ վրացիներ ներկայացնելու միտումը, որի խորքում, իհարկե, ընկած է հակահայ տրամադրվածությունը:

Իսլամական հասարակության սեկուլարացման ինստիտուտի համանուն կայքէջում մի «իսլամացած» հայ իր 16 սեպտեմբեր, 2002 թվակիր էլեկտրոնային նամակում գրում է. «Հայախոս մուսուլմաններով բնակեցված գյուղեր կան: Որոշ աղբյուրներ նրանց թվաքանակը գնահատում են շուրջ 2 միլիոն» [13] :

Գրիգոր Ավագյանի տվյալներով՝ «Թուրքիայում, մասամբ նաև այլ երկրներում ապրում են շուրջ 4 միլիոն մուսուլման համշենահայեր» [14]:

Ըստ բուն համշենահայ, «Գյոթե» համալսարանի գիտաշխատող, նախկին վարչապետ Մեսութ Յըլմազի ազգականուհի Ալիե-Ալիս Ալթըի (Կոստանյան)՝ «Այսօր ավելի քան մեկ միլիոն իր ազգակիցները գտնվում են ազգային ինքնագիտակցության ու զարթոնքի գործընթացում» [15]:

Ալիե Ալթըի զավակ, գերմանաբնակ Դենիզ Ալթըի հարցազրույցում նկարագրվում է համշենահայության վիճակը և հստակորեն ակնարկվում Թուրքիայի շուրջ 1,5 միլիոն հաշվվող համշենահայերի մասին [16]:

Թեև կրոնական այլասերումը անցանկալի իրականություն է համշենահայերի համար, սակայն որոշ տվյալներով ապացուցվում է, որ իսլամի նկատմամբ նրանց հավատքը հեռու է սուննիականությանը հատուկ մոլեռանդությունից: «Համշենները շատ կրոնական չեն,- պարզաբանում է Հովան Սիմոնյանն իր դասախոսական ելույթներից մեկում,- նրանք շատ քիչ մզկիթներ ունեն և շատ քիչ մարդիկ են ուշադրություն դարձնում դրանց: Համշենցիները նաև օգտագործում են ալկոհոլիկ խմիչքներ» [17] :

Թուրքիայի համշենահայերը վերջին տարիներին ազգային գիտակցության զարթոնքի մեծ աշխուժություն են ցուցաբերում: Այս իմաստով հատկանշական են նրանց ինքնարծարծման ելույթներն ու հոդվածները՝ մի շարք կայքէջերում և էլեկտրոնային ֆորումներում [18]:

3. «Թաքուն» հայություն. - Ներկայիս «Անատոլիայում» բնակված հայությունը, իր էթնիկական վերակերպված տիպերով, շարունակում է մնալ խորհրդավոր և գրեթե անճանաչելի: Մյուսների համեմատությամբ՝ «թաքուն» հայերի պարագան թերևս ամենաբարդը պիտի համարել:

Փաստերից և ապացույցներից երևում է, որ այժմ «թաքուն» հայություն է ապրում կենտրոնական և արևելյան Թուրքիայի բազմաթիվ շրջաններում, հատկապես Արևմտյան և Հարավարևմտյան Հայաստանում:

Քենան Էվրենի զինվորական իշխանությունների ժամանակվանից սկսած և հատկապես 1990-ական թթ. ընթացքում թուրքական բանակն ավերել կամ այրել է բազմաթիվ գյուղեր և գյուղակներ՝ Թուրքիայի արևելյան գավառներում և տեղահանել շուրջ երեք միլիոնի հասնող բնակչություն:

Այս զանգվածային վանդալիզմից չէր կարող անմասն մնալ հայությունը: Մեզ դեռ հայտնի չէ հայկական գյուղերի կրած մարդկային և նյութական վնասների ճշգրիտ չափը: Մարդու իրավունքների պաշտպան մի կայքէջում ասվում է. «Թվով 729 գյուղեր (թե՛ քրդական և թե՛ *քրիստոնեական*) դատարկվել են անվտանգության ուժերի միջոցով» [19] :

«Թաքուն» հայության ընդհանուր թվաքանակի բնորոշման համար քիչ տվյալներ կան մեր տրամադրության տակ:

Թեսա Հոֆմանը *«crypto-armenians»* կամ «թաքուն» հայերի թվաքանակը գնահատում է 30-40 հազար» [12, p. 11-12]: Մեր համոզմամբ՝ այս թվաքանակը խիստ թերագնահատված է:

Մյուս կողմից՝ գերագնահատված մի թվաքանակի մասին ակնարկներ կան Քրդստանի աքսորյալ խորհրդարանի փաստաթղթերում: Ընդ որում՝ այսպես կոչված, «Մեծ Քրդստանի» սահմաններում ապրող ասորի և հայ բնակչության թվաքանակի գումարը գնահատվում է ամբողջ բնակչության շուրջ 10 %-ը [20]:

Եթե Թուրքիայի քրդերի միջին թվաքանակը 15 միլիոն համարենք, ապա ասորի և հայ բնակչության թվաքանակը, ըստ վերոնշյալ հիմնավորման, պիտի գնահատել՝ շուրջ 1.5 միլիոն [21]:

Քրդական *«Ozgur politik»* էլեկտրոնային թերթի 1997թ. դեկտեմբերի համարը ևս ակնարկում է նման մի թվաքանակ՝ ասելով, որ «քրդական տարածքներում» սուրիանական և հայկական ծագումով 2 միլիոն «քրդեր» կան [22]:

Ասորի և հայ բնակչության համար 1.5 միլիոն թվաքանակը թեև առայժմ փաստարկելի և ստուգելի չէ, սակայն լուրջ նկատառման է արժանի: Այնուամենայնիվ, հայ մնացորդացի բնական աճը նկատի առնելով՝ «թաքուն» հայության թվաքանակն առնվազն մի քանի հարյուր հազար կարելի է հաշվել:

Թուրք առաջադեմ մտավորական Քեմալ Յալչինը մի հարցազրույցի ընթացքում ահա այսպես է բնութագրում մերօրյա «թաքուն» հային. «Այդպիսի ընտանիքներն ապրում են որպես քուրդ կամ թուրք մուսուլմաններ, և նրանց երեխաներն իրենց մայրենի լեզուն չեն սերտում: Իմ տեսած թաքուն հայերից շատերը 15-17 տարեկաններ էին, որոնց ծնողները նրանց զգուշացրել էին չխոսել այդ մասին» [23]:

Իսկ «թաքուն» հայության քաղաքական տիպարի և ուղղվածության մասին լիարժեք գաղափար կազմելու համար շահեկան կարող է լինել նաև այն բնույթի փաստերին ակնարկելը, որոնք վկայում են քրդական կազմակերպությունների շարքերում ծագումով հայ անդամների մասին:

«Ջումհուրիեթն» իր 1993թ. հուլիսի 11-ի համարում հրապարակել է հոդված *PKK*-ի դեմ «հոգեբանական շարժում» նախաձեռնելու նպատակով վարչապետ Չիլերի նախագահությամբ ստեղծված պետական քարոզչական հանձնախմբի մասին, որը *PKK*-ի դեմ կանոնավոր տեղեկատվություն պիտի տար Թուրքիայի քաղաքական շրջանակներին: Հանձնախումբը, ըստ նշված աղբյուրի, լուսանկարների և այլ տեղեկությունների միջոցով նպատակ ուներ ճշտել *PKK* շարքայիններին և հարց ուղղեր նրանց, թե գիտեն, արդյոք, նրանք, որ Աբդուլահ Օջալանը հայերի ձեռքին գործիք է դարձել և այլն: «Լուսանկարների միջոցով,- գրում է «Ջումհուրիեթը»,- *PKK*-ականների համար հստակ է դառնալու կազմակերպության մեջ գործող ահաբեկիչների *հայկական ծագումը»* [24]:

«Գորշ գայլեր» աշխատության հեղինակներն ասում են, որ Թուրքիայում *PKK*-ն հաճախ է ներկայացվում որպես «հայ ստրուկներից» բաղկացած կառույց: *MeHePe*-ի երբեմնի առաջնորդ «Ալփարսլան Թուրքեշը նույնիսկ բերնից բաց է թողել, որ Աբդուլահ Օջալանը քուրդ չէ, այլ հայ է և իր իսկական անունն էլ Ակոբ Արթինյան է» [25]:

Աջակողմյան «Մեյդան» թերթը չի խորշել նույնիսկ այս մասին վերջնական եզրահանգումներ հրապարակելուց: «Թուրքիայում,- հայտարարում էր «Մեյդանը»,- քրդական հարց գոյություն չունի, այլ հարցը Հայկական հարց է» [26]:

Օջալանի հայկական ծագման մասին առաջին անգամ արտահայտվել է Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը դեռևս 1990-ականներին: Այս մասին ակնարկվել է 2000թ. ՄԱԿ-ի առանձին զեկուցագրում [27]:

Թուրքական մի շարք աղբյուրներ, առևտրական շրջանակներում համբավ ունեցող Բեհչեթ Ջանթուրքին ներկայացնելով որպես PKK նյութական գործերի և հայ ահաբեկչական խմբերի հետ կապերի պատասխանատու, շեշտում են, որ նա «ծնվել է 1950թ., Դիարբեքիրում, քուրդ հորից ու հայ մորից» [28]:

Մյուս փաստը վերաբերում է *PKK* նախագահական խորհրդի անդամ Նուրիե Գեսպիրի և դրա Կենտրոնական կոմիտեի անդամներ Բեքիր Բաքրճյանի և Մուսա Հաճբևի հայկական ծագմանը, որն առաջինը բացահայտել է «Թուրքիե» օրաթերթը 2002թ. նոյեմբերին [29]:

Ազդեցիկ «Միլլիեթ» թերթում Թուրքիայի ռազմական արտակարգ դրության կառավարիչ Յունիլ Էրքանը հայտարարել է. «Մեր համակարգիչներում արձանագրել ենք հայկական ծագում ունեցող 800 *PKK* անդամներ» [12, p. 35]:

Որոշ աղբյուրների համաձայն, *PKK* զինված անդամների թիվը շուրջ 5500 է, ինչը համապատասխանում է Բիթլիսի տանկային ստորաբաժանման հրամանատար, գեներալ Թագմայի հայտնած տեսակետին [30]: Նա մամուլին տված մի հարցազրույցում պնդում էր, «որ PKK ամեն յոթերորդ անդամ հայ է: *PKK* այդ անդամները զավակներն են այն հայերի, ովքեր Օսմանյան կայսրությունը կոնակից դաշունահարեցին Առաջին աշխարհամարտի ընթացքում» [12, p. 36]:

Նույն գեներալ Թագման 1995թ., մի այլ առիթով, ևս հայտնում է, որ տեղի ունեցած ինչ-որ ծանր մարտերի ընթացքում «քրդեր չկային այնտեղ: Նրանք, ովքեր մեր ստորաբաժանման ուժերի գրոհների արդյունքում նահանջեցին դեպի լեռները, *հայեր էին»* [31]:

Ներկայիս Եվրոպայում հաստատված մի քանի «թաքուն» հայերի հետ առանձին հարցազրույցներից պարզվում է, թե ինչպես նրանցից ոմանք աշխատել և պայքարել են *PKK* շարքերում և, Օջալանի գերեվարությունից հետո, հիասթափվելով, որոշել են վերադառնալ մայր հայրենիք կամ մեկնել Հոլանդիա, Գերմանիա և այլն [32]:

PKK էլեկտրոնային տեղեկատուներից մեկում կարդում ենք հայաբնակ Սայլակկայա (Ջբին) պատմական գյուղում 1970թ. ծնված հայ երիտասարդ Հուսեյն Սարիչիյեքի մասին, որը զոհվել է Թուրքիայի բանակի դեմ մարտերում 1988թ. [33]:

Թուրքիայի ծայրահեղ ձախ հոսանքներից մեկի՝ *TIKKO* կազմակերպության համացանցային էջում կարելի է հանդիպել 1946թ. Ամասիայում ծնված Կարպիս Ալթինօղլուի անվանը, կենսագրականին և նրա քաղաքա-

կան-տեսական հոդվածներին, ընդ որում՝ հաճախ է հիշատակվում նրա հայ լինելու պարագան [34]:

Առավելաբար Զազա-ալևիական շրջանակներում աշխատող և Դերսիմի լեռներում մաքառող նույն այդ *TIKKO* կազմակերպության զոհվածների ցանկում հանդիպում ենք երեք հայ երիտասարդների կենսագրականներին [35].

Արմենակ Բաքրչիյան, ծնված Տիգրանակերտում՝ 1953թ., զոհված Խարբերդում՝ 1980թ.: Նուբար Յալիմ, ծնված Մարդինում՝ 1957թ., զոհված Ամստերդամում՝ 1982թ.: Մանուել Դեմիր, ծնված Կեսարիայի Բունիան քաղաքում՝ 1963թ., զոհված Ստամբուլում՝ 1988թ.: Հետաքրքիր է իմանալ, որ Մանուել Դեմիրի հերոսական տիպարին ու սխրանքներին նվիրված թուրքերենով երգ է հորինվել, որը հնչում է քրդական շրջանակներում:

Եզրակացություն

Այսպիսով, բազմաթիվ լրագրություններ, հաղորդագրություններ և ուղեգրություններ բավարար հիմք են տալիս եզրակացնելու, որ ներկայումս տարբեր տիպերով հայության հետքեր կան անատոլիական առնվազն 80-90 քաղաքներում, գյուղերում և գյուղակներում:

Տիպաբանական բնորոշմամբ հանդերձ՝ դյուրին չէ մեր խնդրո առարկա հայ բնակչության թվաքանակի մասին վերջնական տեսակետ հայտնել: Այդուհանդերձ, մեջբերում ենք մի քանի վկայություններ:

Իսլամական *«Jihadwatch»* էլեկտրոնային թերթն իր 2005թ. փետրվարի 17-ի համարում գրում է. «Մինչև մեկ միլիոն հայեր են դեռ ապրում Թուրքիայում» [36]:

«Մեր գնահատմամբ,- ասված է ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի 2003թ. մայիսի 31-ի հայտարարության մեջ,- մոտավորապես 1.000.000 հայեր դեռ ապրում են Արևմտյան Հայաստանում» [37]:

«Ներկայում, Թուրքիայում, շուրջ երկու միլիոն է հաշվվում թիվը այն հայերի,- գրում է Արմեն Մելիքյանը,- որոնք իսլամն են ընդունել անցյալում, գոյատևել են ֆիզիկապես և աճել են քանակությամբ: Նրանք չեն թուրքացել: Շատերը գիտեն իրենց հայկականության վերաբերյալ, սակայն վախենում են խոսել այդ մասին: Այդ երկու միլիոն մարդիկ հայ են համարվում...» [38]:

«Երկիր» շաբաթաթերթի աշխատակից Արամ Անանյանն իր վերլուծական հոդվածում, իմիջիայլոց, հայտնում է. «Ըստ զանազան գնահատականների՝ Թուրքիայում բնակվում են 2-3 միլիոն մահմեդականացած հայեր» [39]:

«Գյոթե» համալսարանի գիտաշխատող Ալիե-Ալիս Ալթրի համոզմամբ՝ «Մինչ երեք միլիոն թուրքացած հայեր կան, որոնք փորձում են իմանալ իրենց ծագման մասին, տասնամյակների լռությունից հետո...» [40]:

Կարիքավոր եկեղեցիների օժանդակության հիմնարկի 1998թ. Թուր-

քիայի մասին զեկուցագրում կարդում ենք. «20 հազար բապտիստ քրիստոնյաներին իրականում պիտի գումարել ևս չորս ու կես միլիոն քրիստոնյաների, որոնք այնտեղ ապրում են կեղծ և թաքուն ինքնությամբ» [41]:

Սույն թվաքանակը հաստատող մի շատ հետաքրքրական տվյալի ենք հանդիպում *«Planet of Diaspora»* թերթում, ուր Թուրքիայի հայության թվաքանակը ներկայացվում է 4.500.000 մարդ [42]:

Եթե ի մի բերենք Թուրքիայի ներկայիս հայության ընդհանուր թվաքանակի մասին վկայությունները, ապա դրանց միջինը մեզ հանգեցնում է շուրջ 3.000.000 թվաքանակի, որը, նկատի առնելով բազմաթիվ անորոշությունների և անճշգրտությունների առկայությունը, կարելի է ամենայն չափավորությամբ իջեցնել 2.000.000-ի:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «Անատոլիայի» «պաշտոնական» հայությունը մեր հետազոտության աշխարհագրական շրջագծում կազմում է աննշան թվաքանակ, թերևս հինգ հազարից պակաս, «իսլամացած» հայության թվաքանակը, անցնելով միլիոնի սահմանը, կազմում է շուրջ 1.300.000 մարդ, իսկ «թաքուն» հայությունը՝ ավելի քան 700 հազար մարդ:

Ամեն դեպքում՝ իրողությունն այն է, որ ստվար թվով հայ էթնիկական տարր կա Թուրքիայի արևելյան երկրատարածքներում, Արևմտյան և Հարավարևմտյան Հայաստանում, պատմական Կիլիկիայում, ինչպես նաև Փոքր Հայքում և հարակից շրջաններում. էթնիկական վերակերպված տարր, որ մաքառում է ինքնաճանաչման ու իր ինքնության պահպանման համար: «Մեզ մի՛ մոռացեք,- դիմում է բուն սասունցի, այժմ Մուշում բնակվող Արմեն Մարտիրոսյանը,- Վարդոյի և այլ շրջաններում վերապրող շատ հայեր կան: Հայեր, որոնք մինչև վերջերս վախենում էին իրենց ինքնությունը հայտնելու, բայց այսօր խիզախաբար արտահայտվում ու մաքառում են հայ մնալու համար» [43]:

«Միլլի գազեթե» թերթում Մեհմեթ Էյքի ստորագրությամբ 2004թ. հուլիսի 31-ին հրատարակված հոդվածում հեղինակը պնդում է, որ «*օտարականների կողքին հայերն էլ* սկսել են լայն *հողատարածքներ* գնել Կարսի սահմանային շրջանում»:

Հոդվածագիրը, հայտնելով, որ արդեն հավաստի աղբյուրներով՝ «Ագեաքա» սահմանային շրջանի հողատարածքների «գրեթե ամբողջությունը այլևս «անպաշտոն կերպով» պատկանում է հայերին», փորձում է ստեղծել քաղաքական ուրույն տեսություն հայ-թուրքական սահմանների բացման առնչությամբ:

Երկար վերլուծումներից հետո նա, ի վերջո, պարզաբանում է. «Արդեն ասվում է, որ մեր երկրի մեջ *մեծ թվով* «թաքուն» հայեր են ապրում, որոնք *ըստ երևույթին* թուրք ու մահմեդական են, բայց եթե իրականության մեջ հայկական ինքնություն ու գիտակցություն ունեն, այդ պարագայում նշանակում է, որ անբնական մի վիճակ կա մեջտեղում» [44]:

Այս հատկանշական տողերից կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի պետական մտածողության տեսակետից՝ «Անատոլիայի» հայության հարցը նախևառաջ պարզ իրողություն է, անվիճելի և, իհարկե, «անցանկալի» փաստ, ապա՝ և՛ պետական անվտանգության ու երկրի ամբողջականության հետ կապված լուրջ մտահոգություն, և՛ ապագայի գլխացավանք:

Թերևս այս մտահոգությամբ է հիմնավորվում այն շրջաբերականը, ըստ որի՝ Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը ցուցումներ է տալիս 81 մարզպետարաններին՝ իրենց մարզերի հայ, հույն, ասորի և այլ փոքրամասնությունների մասին վիճակագրություն պատրաստելու և կենտրոն առաքելու համար [45]:

Արդեն տարիներ է, ինչ Թուրքիայի քաղաքական դաշտում սովորական երևույթի են վերածվել պետական գործիչների և դեմքերի հասցեին փոխադարձ զրպարտությունները: Այդ շարանում ամենաազդեցիկը մնում են նշյալ անձանց էթնիկական ծագման մասին բացահայտումները:

Թուրքիայի երբեմնի վարչապետ Մեսութ Յըլմազի և Թուրքիայի առաջին կին օդաչու Սաբիհա Գյոքչենի հայ լինելու պարագաներից բացի՝ ցարդ այդ «մերկացումների» առարկա են դարձել նաև գործող նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը՝ որպես ադիյամանցի հայ, և «Գորշ գայլերի» ներկա ղեկավար Դևլեթ Բախչելին՝ որպես սսեցի կամ կոզանցի հայ [46]…

Նման «զրպարտությունների» ճշմարտացիությունը ստուգելու մտադրություն չունենք այստեղ, սակայն մեզ խիստ հետաքրքրում են Թուրքիայի լայն հասարակայնության շրջանում դրանց ընկալելի և հավատալի լինելու հանգամանքն ու պատճառները:

Հայոց Ցեղասպանության տաբուի մասին բազմաթիվ տեսակետներում, Եղեռնին առնչվող մանրամասնություններին զուգահեռ, ընդգծվում է Թուրքիայում վերակերպված հայ տարրի առկայությունը: Այսպես՝ Քեմալ Յալչինը, ամենաապաքաղաքական հողի վրա ներկայացնելով Ցեղասպանության հետքերը, լայնորեն քննարկում է «թաքուն» հայության վիճակը: Օրհան Փամուքը, քաջաբար նշելով մեկ միլիոն հայության բնաջնջման պարագան, իր «Զյուն» վիպակում պատմում է նաև Կարսում իր այցելած «հայկական գյուղերի» մասին: Մեսրոպ արք. Մութաֆյանը, Եղեռնի 90-ամյակը հիշեցնելով Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահին, իմիջիայլոց ակնարկում է «Անատոլիայում» թուրքերի կողքին ապրող հայության մասին: Ֆեմինիստ Հեդիե Սելման (Ելդա), ցավ հայտնելով քրդերի միջոցով կատարվածների համար, պահը չի կորցնում հիշեցնելու բիթլիսցի իր ընտանիքի հայկական ծագումը: Նույն մոտեցումն է ցուցաբերում նաև «թուրքացած» Ֆեթիհիե Չեթինը, և այլն, և այլն:

Իրոք, ի՞նչն է ստիպում Թուրքիայի զանազան հայ կամ ոչ հայ գործիչներին, Հայկական հարցի մասին արտահայտվելիս, արծարծել նաև մեզ հետաքրքրող հարցը, եթե ոչ այն հստակ ճշմարտությունը, որ սույն հարցն

ուղղակիորեն աղերս ունի հայապատկան և անմիջական դրկից տարածքներում վերապրած ու վերակերպված հայության ներկա իրողության հետ:

Այս համատեքստում իրական է թվում Թուրքիայի պետական շրջանակներում առկա երկյուղը, որ արծարծվել է Թուրքիայի կառավարության Մարդկային իրավունքների խորհրդի նշված տեղեկագրում, ըստ որի՝ եթե «Լոզանի դաշնագիրը ճիշտ գործադրվի, երկիրն այլևս կփրկվի Սևրի դաշնագրի «սինդրոմ»-ից» [47]:

Քաղաքական խորքային վերլուծությունների կարոտ է Թուրքիայի էթնոկրոնական խմբերի համատեքստում հայ մնացորդացի կամ վերակերպված հայության հարցը: Այդ հսկայական ներուժը կարող է կա՛մ ընթանալ սոսկ տարերային զարտուղիներով, շահագործվել այլևայլ համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական ուժերի կողմից և, ի վերջո, մարել, կա՛մ վերածվել ազգային շարժման և վերազարթոնքի:

Սեպտեմբեր, 2005թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Նոր Մարմարա, 2004, հոկտեմբերի 18:
2. Նոր Մարմարա, Ստամբուլ, 2004, ապրիլի 2:
3. Ալիք, Թեհրան, 1980, դեկտեմբերի 18:
4. *Մելքոնյան Ա.,* Հայ բնակչության էթնոկրոնական դիմախեղման գործընթացներն Արևմտյան Հայաստանում XVI-XVIII դարաշրջանում, գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2004, էջ 44:
5. Դրոշակ, Ժնև, հուլիս 1925, էջ 11:
6. Ալիք, 2004, դեկտեմբերի 14:
7. Ալիք, 1994, մայիսի 19:
8. Հայերն աշխարհում, Երևան, 1995, էջ 45:
9. http://en.wikipedia.org/wiki/Hamshenis
10. *Simonian H.H.,* History and Identity among the Hemshin, ISIM Newsletter 14, June 2004, pp. 24,25.
11. http://www.armeniapedia.org/index.php?title=Hamshen
12. *Hofmann T.,* Armenians in Turkey today, October 2002, p. 11.
13. http://www.secularislam.org/testimonies/More Testimonies Why I Left Islam.htm.
14. *Ավագյան Գ.,* Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, 1990, էջ 21:
15. Դիտակ, Բեյրութ, 2002, մարտ-ապրիլ, էջ 26:
16. Դիտակ, 2004, ապրիլ-մայիս, էջ 58:
17. http://www.lazebura.net/english - Lazebura.net
18. -http://www.yaylayolu.info/forum/
    -http://hyeforum.com/index.php?showtopic=3459
    -http://www.devrimcidemokrasi.org/arsiv/2001/Sayi-13/arastirma2.htm
    -http://karalahana.com/ -http://f20.parsimony.net/forum36933/

19. http://www.jubileecampaign.co.uk/world/tur2.htm.
20. http://www.kurdish.com/media/article/kwr-article-15.htm.
21. http://www.khrp.org/news/pr2004/26-11-04.htm, Նոր Մարմարա, 2005, փետրվարի 15:
22. www.ozgurpolitika.org/1997/aralik/1226kyb.htm.
23. *Kemal Yalcin,* Armenians In Turkey: The silence broken through?, 22.1.2002, http:/ www.nadir.org/nadir/initiativ/kurdi-almani-kassel/aktuuell/2002/jan2002/ armenier_tr.htm.
24. Դրոշակ, Աթենք, 1993, հուլիսի 29 - օգոստոսի 25, էջ 78:
25. *Բրամ Ս., Ուլգեր Մ.,* Գորշ գայլեր. հետազոտություն թուրք ծայրահեղ աջակող-մյանների մասին, թարգմ.՝ Արսեն Նազարյան, Երևան, 2003, էջ 152:
26. Ալիք, 1994, նոյեմբերի 13:
27. Situation in Turkey, Interim report of the Special Rapporteur of the Commission on Human Rights on the elimination of all forms of intolerance and of discrimination based on religion or belief, Addendum 1, General Assembly, 11 August 2000, p. 14.
28. http://www.biyografo.net.
29. Նոր Մարմարա, 2002, նոյեմբերի 11:
30. Official general report on Turkey, Directorate for Movements of Person, Migration and Consular Affairs Asylum and Migration Division, May 2001, p 31.
31. Europian Court Of Human Rights, Former Seconds Section, Case Of Tepe V.,Turkey, (Applicatoin no.27244/95), http:// www.vahitbicak com/ tepetr.htmhttp.
32. Ազգ, Երևան, 2005, հունվարի 18:
33. http:// www pkk.org/2002/03.
34. http://arsiv.aksiyon.com.tr/arsiv/140/pages/dosyalar/dos1.html.
35. http:// babaerdogan.org/partisan.
36. http://www.jihadwatch.org/archives/2005/02/005091print.html.
37. http://www.anca.org/ancadesk.php.
38. http://www.armeniadiaspora.com/population/note_turkey_pop.html, *Armen Melikian,* Armenian Watch Monitors Human Rights Violations Against Armenian Worldwide.
39. Երկիր շաբաթաթերթ, Երևան, 2004, հոկտեմբերի 22:
40. Դիտակ, 2004, ապրիլ-մայիս, էջ 58:
41. Religious Freedom in the Majority Islamic Countries- 1998 Report, A.C.N Italian Office, 1998.
42. http://www.iatp.am/economics/migr/hayga-e95.htm, Planeta of Diaspura, #25, 1999.
43. Դիտակ, 2004, ապրիլ-մայիս, թիվ 24, էջ 60:
44. Նոր Մարմարա, 2004, օգոստոսի 1:
45. Հայրենիք վիքլի, 2003, դեկտեմբերի 12:
46. Ազգ (անգլերեն բաժին), 2004, # 146, օգոստոսի 25:
47. Նոր Մարմարա, 2004, հոկտեմբերի 18:

ՀԱՎԵԼՎԱԾ

Թուրքիայի էթնոկրոնական խմբերը[1]

	էթնիկական խումբ	կրոն	դավանանք	ենթախումբ
1	2	3	4	5
1	աբդալ	իսլամ	սուննի	
2	ադրբեջանցի	իսլամ	շիա	
3	արաբ	իսլամ	սուննի	
4	արաբ	իսլամ	շիա	ալևի
5	արաբ	քրիստոնյա	ուղղափառ	մելչիթ
6	ասորի	քրիստոնյա	ուղղափառ	քելդանի
7	ասորի	քրիստոնյա	ուղղափառ	ջելո
8	ասորի	քրիստոնյա	ուղղափառ	սիրիակ
9	բոշնակ	իսլամ	սուննի	հանեֆի
10	գնչու	իսլամ	-	-
11	դաղստանցի	իսլամ	սուննի	հանեֆի
12	դաղստանցի	իսլամ	սուննի	շաֆեյի
13	զազա	իսլամ	սուննի	շաֆեյի
14	զազա	իսլամ	շիա	ալևի
15	թահթաջի	իսլամ	սուննի	-
16	թաթար - ուզբեկ	իսլամ	սուննի	հանեֆի
17	թաթար - ղրիմի	իսլամ	սուննի	հանեֆի
18	թաթար - նոգայի	իսլամ	սուննի	հանեֆի
20	թուրք	իսլամ	սուննի	-
21	թուրք	իսլամ	սուննի	-
22	թուրք	իսլամ	սուննի	յուրուկ
23	թուրքմեն	իսլամ	սուննի	-
24	թուրքմեն	իսլամ	շիա	ալևի
25	լազ	իսլամ	սուննի	հանեֆի
26	կարափափախի	իսլամ	սուննի	-
27	կարաչայ	իսլամ	սուննի	հանեֆի
28	կիրգիզ	իսլամ	սուննի	հանեֆի
29	հայ	քրիստոնյա	ուղղափառ	-
30	հայ	քրիստոնյա	կաթողիկե	-
31	հայ	քրիստոնյա	բողոքական	-
32	համշենցի	իսլամ	սուննի	-
33	հրեա	մովսիական	-	-
34	ղազախ	իսլամ	սուննի	հանեֆի
35	հույն	քրիստոնյա	ուղղափառ	-
36	հույն	քրիստոնյա	կաթողիկե	-
37	հույն	քրիստոնյա	բողոքական	-
38	հույն պոնտացի	իսլամ	սուննի	-
39	ուզբեկ	իսլամ	սուննի	հանեֆի
40	չերքեզ	իսլամ	սուննի	հանեֆի
41	սերբ	քրիստոնյա	ուղղափառ	-
42	սուդանցի	իսլամ	շիա	ալևի
43	վրացի	իսլամ	սուննի	հանեֆի

[1] Oehring O., Human Rights in Turkey, Secularism, Religious Freedom, 2002, missio order no 600 215, p. 2.

1	2	3	4	5
44	վրացի	քրիստոնյա	ուղղափառ	-
45	յուգուրս	իսլամ	սուննի	հանեֆի
46	քուրդ	իսլամ	սուննի	հանեֆի
47	քուրդ	իսլամ	սուննի	շաֆեյի
48	քուրդ	իսլամ	շիա	ալևի
49	քուրդ	եզդի	-	-
50	օս	իսլամ	սուննի	-

АРМЯНСКИЕ ЭТНОРЕЛИГИОЗНЫЕ ЭЛЕМЕНТЫ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ (1991-2005гг.)

Карен Ханларян

Резюме

Многочисленные публикации дают основания заключить, что в настоящее время этнически армянское население можно обнаружить как минимум в 80-90 населенных пунктах Турции. Однако о численности этого населения трудно сделать точные выводы. Можно предположить, что «официальное» армянство в географических рамках нашего исследования составляет незначительную цифру – примерно 5000, «исламизированное» армянство – 1.300.000, а «скрытое» армянство – более 700.000 человек.

Реальность такова, что в восточной части Турции, в Западной и Юго-западной Армении, в исторической Киликии, Малом Айке и прилегающих территориях есть значительное количество армянских этнических элементов. Они борются за самопознание и сохранение своей национальной идентичности. Этот армянский потенциал может стать предметом спекуляций международных политических сил и угаснуть, или же переродиться в национальное движение и возрождение.